ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19.07.2019թ.
ժամը 12 ^{00}

Մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ (ԳԱՊ)
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
Գնահատողներ՝
- ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
- ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱՏ ծառայության շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան,
Գնումները համակարգող՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող **Ա/Ձ Անդրանիկ Գրիգորի Քեշիշյանի, «ՍՎԱ Մոթորս», «Ժակ և Գոռ», «ՅՈՒՆԻՔ ԼԱՅՆ» և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ների** կողմից ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են և համապատասխանում են բաց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, իսկ **Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյան, «ԿԱՐՎԱ», «ԱԲԻ», «Սենտրալ», «Իդեալ Թրավել» և «ԳԱՎ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ**-ների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝
- **Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի** կողմից ներկայացված 18-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված են երկու տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքի կատալոգային կոդեր որոնցից մեկը սահմանված է հրավերով (ՀՇ-10Ж-3-04), իսկ մյուսը ներկայացվել է մասնակցի կողմից (ՀՇ-10У-3Л) և որի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված տեխնիկական բնութագրին:
- **«ԿԱՐՎԱ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված բոլոր տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով պահանջված գործարանային մակնիշավորման և գործարանային փաթեթավորման մասին տեղեկատվությունը:
- **«ԱԲԻ» ՍՊԸ**-ի կողմից 40-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված կատալոգային կոդը համարժեք չէ հրավերով սահմանված կատալոգային կոդի պահանջներին և վերաբերում է այլ տրանսպորտային միջոցի:
- **«Սենտրալ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում 3, 53, 54, 59, 61, 63 և 67-րդ չափաբաժինների մասով նշված են երկու տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքի կատալոգային կոդեր որոնցից մեկը սահմանված է հրավերով, իսկ մյուսը ներկայացվել է մասնակցի կողմից և 3, 61, 63 և 67-րդ չափաբաժինների մասով ներկայացված կատալոգային կոդերը համարժեք չեն հրավերով սահմանված կատալոգային կոդի պահանջներին:

- **«Իդեալ Թրավել» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում 2 և 68-րդ չափաբաժինների մասով նշված կատալոգային կոդերը համարժեք չեն հրավերով սահմանված կատալոգային կոդի պահանջներին:
- **«ԳԱՎ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում 4 և 58-րդ չափաբաժինների մասով նշված են երկու կատալոգային կոդեր, իսկ 66-րդ չափաբաժնի մասով ներկայացված կատալոգային կոդը համարժեք չէ հրավերով սահմանված կատալոգային կոդի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Քանի որ **Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյան և «ՎԻ ԷՆ ԷՄ» ՍՊԸ**-ի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները որոշեց մերժել վերջիններիս հայտը՝ **Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի** հայտը 16-րդ չափաբաժնի մասով, իսկ **«ՎԻ ԷՆ ԷՄ» ՍՊԸ**-ի հայտը 11, 12 և 13-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացի **«ՎԻ-ԷՆ-ԷՄ» ՍՊԸ**-ից, ով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով, որն էլ գերազանցում է Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված շեմը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ որոշեց «ՎԻ-ԷՆ-ԷՄ» ՍՊԸ-ի տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցները կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ, **Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանը** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 14000 (տասնչորս հազար) ՀՀ դրամի չափով, որը սակայն չի գերազանցում Գնումների ամսին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված շեմը և **«ՍՎԱ մոթորս» ՍՊԸ**-ից, ով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի չափով:

17.07.2019թ.-ին Հայէկոնոմբանկ ԲԲԸ կառավարիչ Ա. Դավթյանի և ՍԲՊ Է. Խաչատրյանի կողմից ՀՀ ՊԵԿ ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչության պետ Արսեն Սառիկյանին ներկայացվել է գրություն, համաձայն որի 17.04.2018թ.-ին Հայէկոնոմբանկ ԲԲԸ Շահումյանի մասնաճյուղի հաշվետեր «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 4000 ՀՀ դրամ գումարի թիվ 042 վճարման հանձնարարականը Կենտրոնական գանձապետարանի Մաշտոցի բաժ. Թիվ 900005001186 հաշվին դրոշմանիշային վճար փոխանցման նպատակով: Նշված փոխանցումը կատարվել է հաճախորդի վերոնշյալ հաշվից, սակայն որպես վճարող սխալմամբ նշվել է այլ ընկերություն: Հաշվի առնելով այն որ վճարումը կատարվել է «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ի կոմից խնդրում եմ Ձեզ 17.04.2018թ.-ի 163028008452 հաշվեհամարից ստացված 4000 ՀՀ դրամ գումարը համարել «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ի կողմից վճարված դրոշմանիշային վճար: Այնուհետև 17.07.2019թ.-ի ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության սպասարկման թիվ 4 բաժնի պետ Իննա Հախոյանի կողմից տրվել է տեղեկանք համաձայն որի «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ի կողմից 17.04.2018թ. դրոշմանիշային վճարի 900005001186 հաշվեհամարին կատարված վճարումը ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում հաշվառված չի եղել բանկի կողմից սխալ ՀՎՀՀ նշված լինելու պատճառով, նշված խնդիրը 17.07.2019թ.-ին ուղվել է: Քննարկելով ՊԵԿ գրությունը և հաշվի առնելով, որ իրականում «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ն վերոնշված 4000 ՀՀ դրամը վճարել է դեռևս 2018թ.-ն գնահատող հանձաշողովը որոշեց «ՍՎԱ մոթորս» ՍՊԸ-ի հայտը չմերժել, քանի որ պարտքի մնացորդը չի գերազանցում Գնումների ամսին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված շեմը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-N որոշման 44-րդ կետը գնահատող հաննաժողովը որոշեց **«ՎԻ-ԷՆ-ԷՄ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչել 16-րդ չափաբաժնի մասով **«ՎԻ ԷՆ ԷՄ» ՍՊԸ**-ին, 11 և 12-րդ չափաբաժինների մասով **«Ժակ և Գոռ» ՍՊԸ**-ին, իսկ 13-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած, քանի որ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և քանի որ արդեն **«ՎԻ ԷՆ ԷՄ» ՍՊԸ**-ի և **«Ժակ և Գոռ» ՍՊԸ**-ի մասով կատարվել էր հարցում գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել, ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան